

1-877-328-9677

Ինչպե՞ս օգտագործել ձեր EBT Քարտը սննդեղեն գնելու համար

Գնում կատարելուց առաջ, ստուգեք ձեր հաշվեկշիռը՝ նպելով ձեր վերջին ստացականին կամ զանգահարելով Հանախորդի Սպասարկություն՝ 1-877-328-9677 անվճար համարով: Այդ հաշվեկշիռը կլինի այն առավելագույնը, որը կկարողանաք ծախսել ձեր քարտով:

Քայլ 1 Ընտրեք ձեր նպարեղենը և գնացեք վճարումի գիծ: Համաձայն վաճառատանը, հնարավոր է, որ դուք ձեր պայմանական սննդեղենը առանձնացնեք ոչ-պայմանական ապրանքներից:

Քայլ 2 Ձեր EBT Քարտը հանձնեք վաճառողին կամ այն սահեցրեք Վաճառակետի (POS) կայանում:

Քայլ 3 Մուտքագրեք ձեր չորս թվանշանանոց Անձնական Ինքնության Համարը (PIN) ստեղնաշարի վրա: Կայանը ցույց կտա (****)՝ ձեր մուտքագրած թվանշանների փոխարեն:

Քայլ 4 Սեղմեք «Մուտքագրեք» (Enter) ստեղնը:

Քայլ 5 Վաճառողը կմուտքագրի սննդադրոշմի գումարը և եթե դա ճիշտ է՝ դուք կսեղմեք «OK» կամ «ԱՅՈ» (YES) ստեղնը:

Քայլ 6 Դուք կստանաք պատճենը տպագիր ստացականի, որը ցույց կտա՝

- Վաճառատան անունը և հասցեն
- Ձեր կատարած գնումի գումարը
- Ձեր սննդադրոշմի հաշվի նոր հաշվեկշիռը

Քայլ 7 Պահե՛ք ձեր ստացականը, որպեսզի հաջորդ անգամ գնում կատարելիս իմանաք ձեր հաշվեկշիռը:

Ձեր սննդադրոշմի նպաստը օգտագործելու դեպքում, չպետք է որևէ վճար վճարեք:

Ինչպե՞ս ստուգել ձեր EBT Քարտի հաշվեկշիռը

Ձեր ընթացիկ հաշվեկշիռը տպագրված է ձեր վերջին ստացականի վրա: **Միշտ պահեք ձեր ստացականները:** Այսուհանդերձ, եթե կորցրել եք ձեր ստացականը, կարող եք զանգահարել Հաճախորդի Սպասարկություն կամ հարցնել վաճառատանը՝ թե կկարողանա՞ք ձեր հաշվեկշիռը ստուգել POS սարքից:

Եթե ձեր քարտը երբևէ կորած կամ գողացված է, անմիջապես անվճար զանգահարեք Հաճախորդի Սպասարկություն՝ 1-877-328-9677 համարով և նրանք ձեզ կասեն ինչպես ստանալ նոր քարտ: Եթե դուք ձեր քարտի կորած կամ գողացված լինելը չտեղեկագրեք, հնարավոր է, որ մեկ ուրիշը օգտագործի ձեր քարտը՝ ձեր բոլոր նպաստները ծախսելու համար, և այս նպաստները վերականգնելի չեն:

Անվճար զանգահարեք Հաճախորդի Սպասարկություն, եթե՝

- Ձեր քարտը կորած կամ գողացված է:
- Ձեր քարտը չի աշխատում:
- Ցանկանում եք փոխել ձեր PIN-ը, որովհետև մոռացել եք ձեր PIN-ը, կամ մեկ ուրիշն էլ գիտի ձեր PIN-ը: Ձեր հանրային օժանդակության գրասենյակը նույնպես կարող է ձեզ PIN-ը փոխելու խնդրում օգնել:
- Ցանկանում եք իմանալ, թե ինչքա՞ն է մնացել ձեր հաշվում:
- Ձեզանից գումար է գանձվել գնումի համար, բայց դուք ապրանքները չեք ստացել, կամ էլ ձեր գնումից շատ ավելին է գանձվել ձեզանից:
- Այլ հարցեր կամ խնդիրներ ունեք:

Օրը 24 ժամ/շաբաթը 7 օր

1-877-328-9677

TTY՝ 1-800-735-2929

Նայեք EBT-ի Ուսուցողական Գրքույկի ձեր աղյուսակին և մուտքագրեք օրը, որ նպաստները ձեր հաշվին պիտի տրամադրվեն:

OSP 03 75071

(Ամսի առաջին օրից մինչև 10-րդ օրը)

State of California
Arnold Schwarzenegger, Governor
Health and Human Services Agency
S. Kimberly Belshé, Secretary
Department of Social Services

Flex your POWER

USDA is an equal opportunity provider and employer.